ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «011/11/11/2014» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» N «011/11/11/2014» ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հունվարի 23-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Բաժանորդի՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հաշվեհամարի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի վավերապայմաններում և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետում «հ/հ 900011012870» թվերը փոխարինվել են «հ/հ 900011018729» թվերով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 9.1 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Սողոմոնյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ cultproject@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

0870627

Համաձայնագիր 4

«Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 011/11/11/2014 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք.Երևան «23» հունվարի 2018թ.

«Յուքոմ» ՍՊ Ընկերությունը, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կարեն Ասատուրյանի, ով գործում է 01.06.2017թ.-ին տրված լիազորագրի հիման վրա այսուհետ՝ «Օպերատոր», մի կողմից, և ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմ ՊԿՀ-ն ի դեմս աշխատակազմի ղեկավար Սամվել Մուրադյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Բաժանորդ», մյուս կողմից (այսուհետ՝ Բաժանորդը և Օպերատորը միասին՝ «Կողմեր», իսկ առանձին՝ «Կողմ»), կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության նպատակով՝ հիմք ընդունելով Բաժանորդի և Օպերատորի միջև կնքված «Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման» թիվ 011/11/11/2014 պայմանագիրը և առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1120 - Ն որոշմամբ, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի վավերապայմաններում և Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ի 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1. «Հ/Հ 900011012870» թվերը փոխարինել «Հ/Հ 900011018729» թվերով:

1.2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է անժամկետ:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Օպերատոր	Բաժանորդ
«Յուքոմ» ՍՊԸ Իրավ. հասցե՝ ք.Երևան, Տերյան 19, բն.4 Գործ. հասցե՝ ք.Երևան, Գր. Լուսավորիչ 9 Հեռ.՝ 374 11 400 400 Ֆաքս՝ 374 11 400 401 ՀՎՀՀ 00024873 Ամերիաբանկ ՓԲԸ Հ/Հ 1570043102134100	ՀՀ Մշակույթի նախարարության աշխատակազմ ՊԿՀ Իրավ. հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3 Գործ. հասցե՝ ք.Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՎՀՀ 02508054 Հ/Հ 900011018729՝ նախարարության աշխատակազմ ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝	Աշխատակազմի ղեկավար՝
_____ Կ.Ասատուրյան	_____ Ս.Մուրադյան